**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

23 օգոստոսի 2022թ. N 995-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 510-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 26-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ.

1. Սահմանել ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության մասնագիտական գիտելիքների շրջանակը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի 2019 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ֆինանսական վիճակագրության և ռիսկերի վարչության մասնագիտական գիտելիքների շրջանակը սահմանելու մասին» N 510-Ա հրամանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

8/23/2022

X ԱՐՄԱՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆ

Signed by: ADILKHANYAN ARMAN 3701920636

Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի
« 23 » օգոստոսի 2022թ. N 995 -Ա հրամանի

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

| N | ԲԱԶԱՅԻՆ | ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ |
|---|---|---|
| 1 | **Իրավական ակտեր**<br>• Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն<br>• Քաղաքացիական ծառայության մասին օրենսդրություն<br>• «Հանրային ծառայության մասին» օրենք<br>• «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք<br>• «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք<br>• «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենք<br>• «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք<br>• Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 743-Լ որոշում | **Իրավական ակտեր**<br>• Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք<br>• «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք<br>• «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենք<br>• «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենք<br>• «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք<br>• «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենք<br>• «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենք<br>• «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենք<br>• «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենք<br>• «Վարկային կազմակերպությունների մասին» օրենք<br>• Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վարկերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 168 որոշում<br>• Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N 439-Ա հրաման<br>• Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2022 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի |

| | | |
|---|---|---|
| | | կառավարման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 291-Լ հրաման |
| 2 | **Այլ**<br>• Հայերենի իմացություն՝<br>«Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012։ http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf<br>• Մեկ օտար լեզվի (ռուսերեն կամ անգլերեն) իմացություն<br>• Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ունակություն՝<br>Ինֆորմատիկա 7-րդ դասարան։ Դասագիրք հանրակրթական դպրոցի համար։ Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան։ Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան։ Երևան 2012։<br>http://fliphtml5.com/fumf/egdx | **Այլ**<br>• Համակարգչային հիմնական գործիքների (Word, Excel, PowerPoint) վարժ կիրառման, ինչպես նաև համակարգչային տեխնիկայից օգտվելու ունակություն |